

կազմուին այդ միջնադեպից, զեկզեմբերը նշա-
նաւոր կլինի մի քանի ապստամբութիւններով,
խռովութիւններով և բանտորական գործադուլներով
աշխարհիս զանազան մասերում:

* *

Թէ յի տունկի մասին Չինաստանում գոյու-
թիւն ունի հետեւեալ աւանդութիւնը, Շատ հին
ժամանակները Չինաստանում ապրում էր մի իմաս-
տուն, որ իւր ամբողջ կեանքը նուիրել էր աստուա-
ծային ճշմարտութիւնների իմաստասիրութեան:
Երբեմն խիստ յոգնածութիւնը փակում էր նորա
կողմերը, նորան շատ մեծ սրտնեղութիւն էր պատ-
ճառում այդ հանգամանքը, որովհետեւ քունը խլում
էր նորա թանգագին ժամերը: Մի անգամ կամ-
նալով պատժել անհնազանդ մարմինը, նա կտրեց
իւր կողմերը և դէն ձգեց: Այդ կողմից խեղճ
բուսաւ մի թուփ, որի տերեւներից պտորաստեց
թէյը—մի խմիչք, որ քուն է փոխցնում:

* *

Ողբում շուն.—Նիւ-Եօրքում մի թանգա-
գին շուն կայ՝ Թիպ անունով: Ամէն օր նորան կա-
րելի է տեսնել այն փողոցներում, ուր ամենից ա-
ւելի ժողովրդի շարժում է լինում և որտեղ կա-
րելի է յուսալ թէ ողորմութիւն կտան: Թիպն աշ-
խարհիս ամենամեծ ժողովարան է: Նորա մէջքին մի
փոքրիկ արկղ է կապած, այս վերնագրով «Մանկա-
կան հիւանդանոցի» խեղճ հիւանդներին ողորմե-
ցէք: Ըունը մտնում է և կանգնում անցորդի
առաջ և շատ յաճախ շան այդ խնդիրն աւելի լսե-
լի է լինում քան մարդկանցը: Վազզելով
Նիւ-Եօրքի բանուկ փողոցների մեծ մասը, Թիպը
հենց որ զգում է թէ մէջքի արկղը ծանրացաւ,
խեղճ մտնում է քաղաքի բազմաթիւ դրամատնե-
րի բաժանմունքներից մէկը, զանձապահը արկղը
գաղարկում է և մուտք գրում յօգուտ «Մանուկ-
ների հիւանդանոցի», իսկ ստացած գումարի սպա-
հոյազիրը ձգում արկղի մէջ, Ըունը խեղճ տուն
է վազում, ապահովազիրը յանձնում և իւր համը
ու առատ ճաշը վայելում:

Մօտ ժամանակներս Թիպը կատարեց մի տար-
օրինակ յօբեւեան: Վատարում էր նորա 7 ամեայ
գործնէութեան տարեդարձը և այդ քան ժամանակ
նա հաւաքել էր հիւանդ մանուկների համար...
50 հազար բուրլի:



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

ԵՐՆԸ ՉԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ

Ե Ի

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՄԻՌՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.

(1810—31).

(Նարունակութիւն *)

Միութեան խնդրին յարակից ընթանում էր
Հայր Միքայէլ վրդ. Չամչեանի «Վահան հաւատոյ»
հեղինակութեան մասին վէճը: «Վահան հաւա-
տոյ»-ի ընդարձակ վերնագիրն է.

«Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայոց»

Շարադրեալ ուղիղ քննութեամբ և աստուա-
ծարանական ոճով, անպատրուակ դիտողութեամբ և
բացայայտ եզերօք, աշխատասիրութեամբ Տեառն
Հօր Միքայէլ վրդ.-ի Չամչեան 1776»:

«Վկայեալ յաղաքս ուղղափառութեան սորին
ըստ նրբագնին քննութեան Ս. Ժողովոյն Հոռովմայ,
որ կոչի Տարածութիւն Հաւատոյ և վերնագրական
գրոշմի սրբազան եօթներորդ պապին Պիոսի քա-
հանայապետի, Համառօտեալ ի բուն սկզբնագիր
մատենէն ծաղկաբաղ հաւարմամբ զլիաւոր խնդրոց,
նորին շարագրութեամբ իսկ հեղինակին, առանց
փոփոխելոյ և ոչ բառ մի անգամ, յուսմանէ ճըշ-
մարտասիրէ»:

Վահան Հաւատոյի մեզ յայտնի ընդօրինա-
կութիւններն են.

ա. Արիստակէս Արքեպիսկոպոս Գաւթեանինը
Շահմաթունեանի օրինակից 1860 թուին նոյեմ-
բեր 1-ին արտագրուած.

բ. Պարսում վերարնակող Մինաս քահանայ
Տէր Պետրոսեանինը՝ Արիստակէս Սրբազանի յիշեալ
օրինակից 1866 թուին փետրուարի 25-ին արտա-
գրուած.

գ. Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Սրբազանագոյն
Հայրապետինը, գրուած զպիւր Յովակիմ ձեռքով
1825 թուին մարտի 26-ին և նորին Վեհափառու-
թիւնից նուիրուած Մայր Աթոռի մատենադարանին:

Մեծ հետաքրքրութիւն է ունեցել Հ. Միքայէլ
վարդ. Չամչեանին վերագրուած Վահան Արշարու-
նու նամակը՝ Հայաստանեայց եկեղեցու ջատագո-
վութեան համար: Մխիթարեանք, յանձին Հայր
Ալիշանի, ոգի ի բուն պնդում էին, որ այդ նամակը
Չամչեանինը չէ. բայց նոյն միարանութիւնից
անջատուած և համարեա ժամանակակից յայտ-
նի Գարրիէլ վարդ. Այվազեանի, վերջը Արքեպիս-
կոպոս հրատարակած Մասեաց Աղաւնին հաստա-
տում է որ Վահան Արշարունին է նոյն ինքն Մի-

* Տես «Արարաց» 1900 թ. համար 7. Կր. 209:

քայլէ 2ամէնանը և ջատագոյութեան նամակն էլ 2ամէնանինը, (Մասեաց Աղաւնի 1860 երես 156—159 և 162—175 և 1858 թ).

Հ. Միքայէլ վարդ. 2ամէնանի Վաճան հաւատոյ՝ ձեռագիրը ուղարկուեց Հոռով՝ քննադատութեան համար: Ընթերցողներին յայտնի Բնագատութիւնս ձեռագրին կից կայ մի յաւելում՝ Հ. Մանուէլ վարդ. Գիւմուշեանեցուց 1836 թուին փետրվարի 20-ին Տփլիսու Սէրգապատ թաղի Ս. Սարգիս ուխտատեղում գրած: Այդ ընդարձակ յաւելումն է. Մանուէլ վարդ.-ը պատմում է, թէ ինչպէս Հ. 2ամէնանի Վաճան հաւատոյ զերբը գողացուեց նրա գրոցից և ուղարկուեց Հոռով: Պատմութիւնը ոչ մի տարակուսութեան տեղի չունի: որովհետեւ նա՝ զերբը գողացող և Հոռով ուղարկող անձից լսածն է պատմում: Գիրք գողացողն է Տէփրիցեան Պօղոս պատերը, որ Վ. Պօլսում տեղի ունեցած խռովութիւնների ժամանակ փախչում է Թէոդոսիա այնտեղ կաթողիկէ Հայերի հովիւ է նշանակվում և ծանօթանում Հ. Մանուէլ վարդ.-ի հետ: որ Խրիմու Հայոց փոխանորդն էր, Այդ յաւելումից երևում է, որ Պօղոս պատերը, որպէս բարեկամ մի օր գնում է 2ամէնանի քննարանը, նրան տանը չէ գնում և օգուտ քաղելով պտուտ տնապահի միամտութիւնից, կրկնելով 2ամէնանի գրոցը, գտնում է Վաճան հաւատոյն և տանում:

Պօղոս Տէփրիցեանը Յովակիմ պատերի հետ արտագրել տալով Վաճան հաւատոյն՝ իսկը ուղարկում է Հոռով: կազմում է Վաճան հաւատոյ-ի համառոտութիւնը: Ընդարձակի համար Հ. Մանուէլ վարդապետը ասում է. «Թերևս ի ձեռն ժամանակի՝ արկղն Սալլանթեան ի լոյս ածցէ: Թէ Պօղոս Տէփրիցեանը և թէ Յովակիմը՝ Լիբանանեաններից էին:

Ի դէպ ասելը դարուս սկզբում հայ կաթողիկէ հոգևորականութիւնը երեք մասն էր բաժանվում. Լիբանանեանը, Վոլլեջեանը և Արրայեանը, որ նոյն է Միսիթարեանը, Վերջիններս յայտնի էին որպէս հայ եկեղեցու նախնաձայնողիներ և ազգային իրաւանց պաշտպաններ. իսկ Լիբանանեանը և Վոլլեջեանը՝ ընդհակառակն՝ ջերմ նախնաձայնողի կաթողիկութեան և պապի գերիշխանութեան:

Հոռովի գրաքննական ատեանը մի մի փաստաբան է պահանջում Արրայեաններից՝ ամբաստանուած գիրքը և իրանց ուղղամտութիւնը պաշտպանելու: իսկ Լիբանանեաններից՝ իրանց ամբաստանութիւնը հաստատելու: Արրայեանց կողմից Հոռով են գնում Հ. Մկրտիչ և Հ. Իգնատիոս, իսկ Լիբանանեաններից՝ նոյն Պօղոս Տէփրիցեանը:

Հոռովի ատեանը արգարացնում է Արրայեաններին, թոյլ է տալիս առաջուայ պէս գրքեր հրատարակել միայն արգելում է Վաճան հաւատոյ-ի տպգրութիւնը, այնքան տարածայնութիւնների պատճառ

տուած լինելուն համար: Տէփրիցեանը կոր ի գլուխ յետ է դառնում, և խոյս ապիս, ինչպէս տեսներ, Թէոդոսիա Խրիմ է գալիս և Յովակիմ պատերը, որ նոյն ինքն Սալլանթեանն է ու քահանայագործում Խարասուրազարում: Արրայեաններից 1822 թուին երբ յայտնի ձանապարհորդ Բժշկեան Մինաս վարդապետը գալիս է Խարասուրազար՝ Սալլանթեանը հեռանում է Մողղոկ և Աստրախան Պատեր Յովակիմ Սալլանթեանը յաջողում է գրուել Յովակիմ Ազա Լազարեանին և հեռացնել տալով Սերովրէ վարդ.-ին, նրա տեղ նշանակում է Լազարեան ձեմարանում ուսուցիչ:

Հ. Մանուէլ վարդ.-ը ատեր գունով է նկարագրում Սալլանթեանին՝ նա պատմում է թէ Սալլանթեանը որպէս փոփոխամիտ մարդ մի տոմսակ թողնելով գրասեղանի վերայ, մօրուքը գերծում ու անհետանում է: բայց ամօրեայ ժամանակ անցնելուց յետոյ, միջնորդներ ձգելով՝ նորից հաստատվում է ձեմարանի ուսուցիչ:

Սալլանթեան Յովակիմ պատերը Յովակիմ Ազա Լազարեանի յանձնարարականով գալիս է Հաղարտ Եփրեմ կաթողիկոսի մօտ և ընդունելով հայ եկեղեցու դաւանութիւնը՝ կոչվում է Միքայէլ վարդ. Սալլանթեան: Հ. Մանուէլ վարդ.-ը այս առիթով ասում է «փոխեալ զանուն իւր առաջին՝ նա՝ որպէս զգիրքն նոյնպէս և զանուն վերապատուելի 2ամէնանին իւրացուցեալ՝ կոչի Միքայէլ վարդապետ: զի ընդ տարակուսանօք լէջի յետ ժամանակաց յարգ միոյն և միւսոյն: Վարպէս անասնի ի 1822 ամի տպեալ այլափոխ անուամբ ի կրօնագիտութեանն: որոյ բողոք ընթացք ի Վաճան հաւատոյ-էն են մուծեալք թէ՛ յայտնի վկայութեամբ և թէ՛ գրչական ձարտարութեամբ:»

Հ. Մանուէլ վարդ.-ի կարծիքը Սալլանթեանի փոփոխամտութեան վերաբերութեամբ հաստատվում է ձերուների մոկվացիների և Լազարեան ձեմարանի հին աշակերտների մէջ առակ դարձած զանազան պատմութիւնների, որոնցից մէկն է և այս: Մի անգամ ևս Սալլանթեանը թողնելով վերջարը, երկար ժամանակ անյայտանալուց յետոյ մի օր դարձեալ երևում է Մոսկովոյում: հայ քահանան այս մասին յայտնում է Յովակիմ Աղային և ասում որ Սալլանթեանը առանց մօրուքի է. Յովակիմ աղան պատասխանում է. թող գայ, նրա գիտութիւնն է ինձ պէտք և ոչ մօրուքը: Հ. Մանուէլ վարդ.-ը ցաւով արտի յայտնում է, որ այդպիսի փոփոխամիտ մարդը 1833 թուին եպիսկոպոսանում է:

Եարակից դէպքերը ժամանակակից անձերի վկայութեամբ հաւատարմացնելու համար գնում ենք այստեղ 1. Հ Մանուէլ վարդ.-ի վերև յիշուած յաւելումը: (քաղելով Վաճան հաւատոյ-ի առիթով գրուած յայտնի Բնագատութիւն ձեռագրում)

զբից) 2. Լ. Միքայէլ վարդ. Զամէնի նամակները ուղղած ա. Մխիթարեան եօթն վարդապետներին որոնք մտան Հայ եկեղեցին. (քաղուած նոյնպէս նամակագրութիւնը նախնեաց ձեռագրագրից) 3. Վկրտիչ ու Իգնատիոս վարդապետներին և 4. Հոռովմայ քահանայապետին 3. Վահան Հաւատոյի վերաբերութեամբ Հոռովմայ քահանայապետի վճռի հայերէն թարգմանութիւն (քաղելով Վահան Հաւատոյ ձեռագրից) և 4. Աստուածաշնչի հրատարակող յայտնի՝ Յովհաննէս վարդ. Ձոհրապետի նամակը գրուած 1818 թուի դեկտեմբերի 26-ին (քաղուած նամակագրութիւնը նախնեաց զբբից)

1. Մանուէլ վարդապետի յանելուածը.

«Առ արգարադատ ընթերցողը նենդեալ մատենի վերագտուելի Հայր Միքայէլ Զամէնից՝ միարանութեան գիտնական ժողովոյն Արքայեանց առձայնելոյն».

«Հրատարակաւ յայտնի է մերազն բանասիրաց և այլ ոմանց աղգաց թէ վասն Ճշմարտութեան աշխատասիրեալ մատենն Վահան Հաւատոյ՝ Վ. Լ. Մ. Զամէնի՝ նինդեալ յոմանց Լիբանանեցոց և հասուցեալ յատեան Հոռովմայ պապին և աստուածաբանից նորին ընդ նմին և ամբաստանութիւն ի սակս Ընդդէմ Երևութեանաց Ճառին ի սրբոյն Յովհաննէս Օձնեցոյն յորինելոյ, Թէ Արքայեանք զհերձեալ եկեղեցին Հոյոց ուղղափառ առձայնեն և ի հարուստ ամաց առ ի յունաց և ի լատինաց դատարանքեալ Յովհան Օձնեցին՝ այժմ՝ գովարանեն և զճառս նորին տպեալ տարածանեն հակառակ ենթագրութեան յիշեալ աղգաց, Վասն այս երկու պատճառաց՝ առ ժամանակ ինչ արգել հրամայեցաւ Արքայեան վանուց տպարանին ի Հոռովմայ և ոմանք յանդամոց այնր վանուց հրաւիրեցան ի Հոռովմ՝ լինել պատասխանատուք ամբաստանողաց. Լ. Վկրտիչ և Հայր Իգնատիոսն».

«Որոց դատ քննութեան շարունակեաց մերձ ի տասն ամս և ոտխը նոցա՝ էին միարանքն Լիբանանու, որք ի կարգին բացայայտին աստ. զի մինչ ցարդ չե էր յայտ բազմաց թէ ոչք և զխարդ դուրացան զմատեան զայն Վահան Հաւատոյ».

«Վ ներկայիս որ ի Տիփսիս պատահեցաւ ինձ ընթեանուլ զքաղուած մի ի բանից այնր Վահան Հաւատոյն որոյ սկիզբն է այսպէս —

«Շարունակութիւն կամ հաստատութիւն յառաջագոյն գրեալ մերոյ տեսարանի կամ յայտնի պայտոցոց նոր հերձուածող լինելոյ վերագատուելի «Լ. Միքայէլ Զամէնեց և բոլոր միարանութեան «իւրոյ» քաղեալ ի բուն ձեռագիր գրուածոյ իւրոյ «զոր իրր հրաչիւք ձգեցաք ի ձեռս մերս յամին «1815 մարտի 4»

«Եւ յառաջարանութիւնն հետեւեցուցանէ. — Վերին նախախնամութիւնն որ անտնօրինելին է «ի վճիռն իւր. չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեացի նոյն ինքն յայտնեաց զնեքքին մեքենայիչն «իւր և զթշնամին որ ի ծածուկ գիշերավարժ աւք. «նութեամբ զձեռագործ և զհոգեկեցոյց տապանն «(հոռովմեական եկեղեցի) քակել հնարէր. զնեքքին «մեքենայիչն ասեմ զորոյ անունն անմարթ է ծած. «կել զկնի ինքն յայտնի գրոշմելոյ զանուն իւր «իշէնն» և Միքայէլ Զամէնեց հիմն և բերան «բոլոր Արքայեան միարանութեան» — Շարունակուած է և. Մանուէլը. —

«Ընդոստուցեալ մտաց իմոց՝ ի բանից համառօտացն ըստ կարի խուզարկութեան ընթերցայ զերկոցունցն զբանս Վ. Լ. Միքայէլ Զամէնեանն ասեմ և ոտխարար համառօտացն. թէ և զգալի էր ինձ՝ թերատ քաղուածու գտանելն յայն տետրական բան Վահան Հաւատոյն, բայց մասամբք զբոլորին ճաշակ զգալն՝ ուշիմ մտաց են գործք».

«Արդ ըստ իմ տկար ենթադատութեան, գտանեմ զՎերագատուելի և Միքայէլն Զամէնեան ամենայն պարագայիւք վարդապետական օրինօք վարեալ ի գրչութեան յիշեալ մատենին, զի կանոնաւոր ձեռնարկութեամբք, նախադասութեամբք, վերջարանութեամբք և հաւատարիմ հին և նախնի սրբոց հարց վկայութեամբ ասէ, յորս հիմնեալք են եկեղեցւոյ ուղղափառութիւնք, մանաւանդ ի հեղինակաց կացուցանողաց այնպիսի խորհրոց և արարողութեանց, այսինքն ի Քրիստոսէ և յառաքիլոց նորա, յայտնի ապացուցութեամբ յամենայն յառաջարկութիւնս և յառաքիլութիւնս իւր պատկերակերտէ, վասնորոյ վստահապէս զրոշեալ և զանուն հեղինակութեան իւրոյ ի սկիզբն մատենին իւրոյ ըստ վկայութեան համառօտաց, վասն զի արգարն իրր և առիւծ անձնագաստան է».

«Եսկ զբանս բժանիղիք համառօտացն տեսանեմ ըստ կանացի պառաւանց օրինի լեզուագարութեամբս իրր յերազի գանդաչողաց լցեալք, զի յոչ ուրեք ըստ եղանակի վիճարանութեանց բայա- յայտեալք կամ հերքեալք նախադասութեամբ և վերջարանութեամբս կամ արժանահաւատ վկայից հոգևոյն զինեալք, այլ արագիւնու լեզուագարութեամբ մտեալք յասպարէզ զէտ նկարեալ տուր- ծոց և խուսափեալ ի բանս որպէս նապաստակ և չղիկ».

«Քանզի յընթացս բոլոր համառօտութեան իւրեանց յայնմ և իմ կացուցանեն զՃիգ համառօտութեան, թերևս այլ հզօրագոյն ձեռամբք յաղթահարել զսիոյեանն՝ զանպարտելին ուղղարանութեամբս, նմին իրի ասն «դատ արացէ ընդ մեր «և ընդ բոլոր Արքայեան միարանութեան մայր «մեր Հոռովմեական անյաղթելի սուրբ եկեղեցին», որ է զուշակ մանկեանցն անբաստանութեան, որ ի սուրբ տետրանին կամ ըստ ապաստանութեան

աղայական խաղուց: զի թէ տղայ մի յաղթահարի յընկերակիցէ իւրմէ՝ ահայտուցանէ զյաղթահարողն իւր այնպիսի բանիւք: այսինքն: գնամ՝ հօրս կամ եղբորն ասեմ որ զքեզ ծնեմէ:

«Աւտօի փոյթը ընդ փոյթ վերաբերին յընթացս համառօտութեանն այնմիկ յերկարութենէն խորշեալ, թողուք ի քննութիւն խոհական ընթերցողաց կամ աստուածաբանիցն Հռովմէական եկեղեցւոյ»:

«Առ այսպիսի անզօր առարկութիւն համառօտաց զինչ կարասցեն խոհական ընթերցողք գտանել, երբ ամբողջ բանք Աւհան հաւատոյ մասնին ոչ են ներկայացուցեալ ոսոխք նորին և ոչ ինքեանք զյայտնի դուռն առարկութեանց բացեալ սեղանաւորել ընթերցողաց, եւ առաւել ևս զայն, որ զանուն հեղինակի մատենին ուրախամիտ լուսանօք հանդիսացուցեալք ի բանս իւրեանց, բայց զիւրեանց զանունն իսպառ անհետ արարեալ յայնմ համառօտութեան, առ որս վերաբերի — հաւատ ծածկեալ չէ պակաս քան զուրացութիւնս:

«Արոց վերադառնայ յինքեանց առաջագրեալն տերունեան անտերիւր բան. զի ոչ ինչ է ի ծածուկ, եթէ ոչ յայտնեցի. թերևս զանց զմարդարութենէն արարեալք ի զիտել թէ՛ գուրն, զոր փորեաց և պեղեաց, ի նոյն անկցի. ևս և զերկրորդելոյն ի սրբոյն Գրիգորէ՝ նարեկացւոյ՝ գուրն ինձ փորեալք, ինքեանք ընկճեցին: որպէս եղև և տեսցն առ այն համառօտիչսն իրականապէս կատարեալ՝ որք են միարանք Լիբանանու Պօղոս պատրին Տէվրիցեանց և Յովակիմ՝ պատրին Սալլանթեանն, զորս մէք ընկերակցի բանիւ նորին լուսարանեմք ասու:

«Զի յիշեալ Պօղոս պատրին Տէվրիցեան ի 1825 ամի՝ փախստեամբ ի Հռովմայ՝ կայր յերկրին Արիմու ի Վաֆա, որ նոյն է Քէֆէ քաղաք, ուր գտանեցեալ ունիթոսեան ժողովրդոց քահանայագործէր, բայց ըստ անհանգիստ բարուց իւրոց վասն միոյ երիտասարդ հացագործ Միքայէլ առն պսակի ընդ մերալն դստեր՝ ամբաստանութիւնս գրէ առ հոգևորականացն նախարար մինիստրն ի մեր քահանայից, որոյ հրամանաւ՝ զիս, զպատմողս զայս, զՄանուէլ վարդապետն Հասինեան Կրիստիանացիս, որ էի յայնժամ՝ յաջորդ Արիմու նահանգի լուսաւորչակրօնիցն մերոց՝ վերանկատող կամ դէպուտատ եզին այն պսակի քննութեան իրաւարանի, կամ կամիսիային ընդ ի կողմանէ Աւնիթոսաց դեպուտատ պատրի Սահակին ի Կեօզլիմէ քահանայագործողի յայնժամ՝ նոյն ժողովրդոց:

«Եւ յս քննութեան կոմիսիան ի Քէֆէ քաղաք երկարեալ յերեք ամիս, ուրանօր էր յիշեալ Տէվրիցեան Պօղոս պատրին ի մեզ, ըստ պատմութեան իւրոյ Տէվրիցեանի հրաշիւք գտանեցեալ Աւհան հաւատոյ գրքի անցքն են ըստ հետեւեալ պատմութեանս:

«Ի ճակատ համառօտութեան գրեալ յամի 1815 և ի 4 մարտի սոյն այս Պօղոս պատրին, գիտելով թէ Ա. Հ. Մ. 2ամչեան յայն օր յայլ ուրեք հրաւիրեցեալ է ի ճաշ, ինքն Տէվրիցեանն իրր յանգէտս գնայ ի բնակարան Ա. Հ. Մ. 2ամչեանի որպէս բարկեամ՝ հիւր ուր ոչ այլոք գտանի՝ բաց ի միոյ պառաւ տնապահէ, Հարցանէ ուր լինելն Ա. Հ. Մ. 2ամչեանի և իրր սպասող զալստեան նորա, պարապի անդ ներկայ գտանեցեալ գրեամբք. ապա ինչորէ ի տնապահ պառաւոյն և զայլ գրեանսն տեսանել, ողորմելի կինն ըստ բարեպաշտութեան իւրոյ, որպէս ընթերցասէր կարգաւոր առն հաւատացեալ՝ ցուցանէ զարկ զմի լի գրեամբք. զպառաւն յայլ գործ աւաբմամբ՝ ինքն Տէվրիցեանն վեր ի վայր արարեալ զարկն զայն՝ գտեալ զմատեանն Աւհան հաւատոյ, առեալ անտի խոյս տայ ի բնակութենէն, տարեալ աւետատու լինի Լիբանանու միարանից և ժողովրդոց ի Պօլիս եղևոց, զի ի Վ. Պօլիս քաղաքի ժողովուրդք նոցին յերկուց զարեբաց ոռոգանէին այսինքն յԱրքայեանց և ի Լիբանանեցոց»:

«Ապա ընդ համչիրակի իւրում ընդ պատրի Յովակիմայ և այլ զրագրաց՝ ցրուեալ զկազմ մատնին նախ զլիակատար օրինակն գրեն և յանձնեն առ Յովակիմ՝ պատրին ընդ նմին փութով ամբաստանական խնդրագրով զիսկ ձեռագիրն առաքեն ի Հռովմ՝ առ պսակն Յետ այնորիկ երկրորեանքն այսպիսի հրաշիւք թէ զողութեամբ ննկեալ մատենին՝ առնեն զհամառօտութիւն, որ տեսանի ջարդ միայն այն համառօտութիւնն և լրացեալն թերևս ի ձեռն ժամանակի արկն Սալլանթեան ի լոյս ածցէ:

«Արդ՝ ժամ է ասել և զամբաստանողական բողոքանաց նոցա՝ առ դահն Հռովմայ, թէ զինչ անտի վախճան ընկալան այս ոսոխքն Արքայեան միարանութեան, զի որպէս Աննեակեան միարանութեան հրամայեցաւ ի պապէն առաքել անդ փաստարան ի Հռովմ նոյնպէս Լիբանանեցոց հրամայեցաւ յառկապէս յայնժամ ընդ այլ փաստարանի և զնոյն հրաշիւք գտող գրոյն զՏէվրիցեանն առաքել անդ, որոց հասեալ ի ցանկային իւրեանց յատեան՝ յետ բազմամեայ քննութեանց արգարացեալ կողմն Արքայեանց, հրամայեցաւ բանալ զտպարանս իւրեանց՝ վանքն և միարանութիւնն այն մեալ յառաջին արտօնութեան յանդորրու ընդ իշխանութեամբ պապին: Եւ ի պարտաւոր երեւելն Լիբանանեցոց, մանաւանդ նոյն Պօղոս պատրիկին՝ աճապարեալ անտի փախստեամբ հրէշագործ Տէվրիցեան հասանի յերկիր կարողագոյն ոռուսաց տէրութեան, ըստ վերոգրելոցն՝ ի Քէֆէ քաղաք, և անդ ևս ի քննութեան մերում, ի բանի յիշեալ պսակին պարտաւորեալ Տէվրիցեան, խոյս տայ զիշերայն և հասանի յապաստանարանն Վովկասու լերանց, եւ հաւաքեալ բանք մեր յերկուց

կողմանց, ցարդ կան ի Պօլիցիան նոյն Կաֆայու
և օրինակքն ի լուսաւորչակրօնիցս հոգևոր կառա-
վարութեան Կարասու քաղաքի:

Իսկ Յովակիմ պատրին Սալլանթեան զկէր
քննութեանն Հոռոմայ, որ ի Պօլիս ջատագովն էր
Տէվրիցեանին: Ի նեղն անկեալ յԱրքայեան միա-
բանից և ի կողմնակից արանց երեւելեաց, նաւար-
կեալ հասանի ի Արիմ ի Վարասուրագար առ ու-
նիթոռեանն: փոքր ժամանակ անզր քահանայա-
գործեալ նոցա ի 1822 թուին ի գալ անդ Բժշը-
կեան Հայր Մինասայ, միաբանին Արքայեան, չուէ
Սալլանթեանն ի Մողղոկ և յԵժդարխան, ուստի
գրութիւն առնելով ընդ վեհազն Աղա Յովակիմ
Լազարեանց՝ գնայ ի Մոսկովի հեռացուցեալ զՍե-
րորէ վարդապետն անախ, ինքն Սալլանթեանն լինի
ի տեղի Սերորէ վարդապետի մանկավարժութեամբ
ի համալսարանն նոյն Լազարեանց, Անդանօր ևս
ի Մոսկով փոփոխական դասին յիշեալ պատրին
Յովակիմ ինքեան միայն յայտ, թէ որպիսի պատ-
ճառանօք դտոմանկ մի գրեալ՝ թողու ի վերայ
ստօլի իւր սենեկին: ինքն գերծեալ զմօրուս իւր՝
գնայ թէ ուր՝ ինքն գիտէ:

«Յետ ամօրեայ ժամանակի վերադառնայ ի
Մոսկով և զմիջնորդս արկեալ առ վեհազն Աղա Յո-
վակիմ՝ կրկին հաստատի ի պաշտօն մանկավարժու-
թեան, որով գրաւեալ զմիտս վեհազնէին՝ միջնոր-
դական գրով նորա հասանի ի Հաղրատու վանքն: առ
սրբազնակատար հայրապետն մեր Եփրեմի փոխեալ
զանուն իւր առաջին, նա որպէս զգիրքն նոյնպէս
և զանուն վերապատուելի 2ամչեանին իւրացուցեալ՝
կոչի Միքայէլ վարդապետ, զի ընդ տարակուսանօք
լիցի յետ ժամանակաց յարգ միոյն և միւսոյն»:

«Որպէս տեսանի ի 1822 ամի տպեալ այլափոխ
անուամբ ի կրօնագիտութեանն, որոյ բոլոր ընթացք
ի Վահան հաւատոյն մուծեալք, թէ յայտնի վիճա-
յութեամբք և թէ գրչական ճարտարութեամբ»:

«Ահա այսպիսի տեսաք զարգախիս համառօտ-
չացն Վահան հաւատոյն, զի ուստի խորշէին ըստ
նեբքին կրից, նովաւ արդ պարծին վասն օգտի
անձին վասնորոյ և բարեօք համարիմք գրել և
զայս ծանօթութիւն յետ համառօտութեան այնու-
րիկի զի ընթերցասերք, յոր և իցէ կողմանց և զայս
ունեկով պարզունակ ինքեանց, բարեօք կշռեսցն
զբան իւրաքանչիւր կողմանցն Արքայեանց Վ. Հ.
Մ. 2ամչեանց, որ զու ինչ ակնկալութիւն ունելով
ի մերազնոցն, միայն զճշմարտութիւն յայանեալ, և
Լիբանանեցոց՝ որք խոչընդակն են ցարդ ազգին
մերոյ և եկեղեցւոյն, նոյնպէս և նոր Միքայէլին
(Սալլանթեան), որ զբազում բարեխաւութիւնս
յազգէն մերմէ ստանալոյն զկնի, եղև ևս եպիսկո-
պոս ի 1833 ամի և կայ ի նոյն մանկավարժութեան
ի Մոսկով յօրացեալ լուսաւորչական կրօնիցն ար-
դեամբ, շողացուցանէ զճայր գրչին յաջ և յահեակ-
զի որ երբեմն ջատագովն էր Լիբանանեցոց՝ այ-

ժլմ՝ ջատագով երեւցութեամբ: Զխրատական բան
վերջարանութեան Վահան հաւատոյն՝ յիշեալ Վ.
Հ. Մ. 2ամչեանի, ամենախնարհաբար աղերսմ
գլխաւոր հոգևոր հովուաց սուրբ լուսաւորչակրօն
ազգին մերոյ՝ քաջ հովուապետապէս բարձցն յե-
կեղեցւոյն մերմէ զյետամուտ աւելորդութիւնն,
և հաստատուն պահեսցն զհին արարողութիւնն
սրբոց հարց, որ ըստ այն ... է ճշմարիտ և ուղղա-
փառ սուրբ եկեղեցին մեր, որովք համարձակ պան-
ծայ ի մէջ այլ քրիստոնեայ ազգաց յախտեանս
ժամանակաց և ոչ թէ նորոգ մուծեալ անարժանու-
թեան այլարանութեամբք թէև գեղեցիկ և խոր-
հըրդականք իցն մուծեալքն:

«Եթէ այնպիսի հեղինակքն ցանկան յիշատակ
թողուլ աստ կարեն ըստ կարեաց իւրեանց յա-
տուկ գրքոյի, կամ մեծամեծ մատեանս յօրինել
յատկապէս, որք մնան յընթրութեան անձնիւր
ընթերցողաց ի կշռագատել գնոյն հեղինակի ուղ-
ղամտութիւնն ևւն, և ոչ թէ քանի մի և եթ յա-
ւելմամբ յեկեղեցական ցուցակն, զազգն ողջոյն
նախատուկոծ առնել պատճառեսցն առաջի լուսա-
ւորեալ ազգաց»:

2. Նստակ Հ. Մ. 2ամչեանի *.

ա. Վերապատուելի վարդապետաց Տեառն Տեառն
Հայր Մկրտիչ վարդապետի և Հայր Իգնատիոս վար-
դապետի

ի Տէր ինդալ.

«Զգիր վերապատուելութեան ձերոյ գրեալ
ի Հոռոմայ ի 6-ն գեկտեմբերի ընկալայ ի 16 փետր.
1816. ընթերցայ առաջի մերայնոց զամենայն զբան-
սրդ, ընդ որ ոչ սակաւ ուրախ լեալ նոցա՝ փառս
մատուցին Տեառն. իսկ ես՝ յառաւելն բերեմ լը-
սի, և ակն ունեմ թէ լուայց, եթէ չկայցէ թըշ-
նամի ընտանի:

Քայց արդ՝ բացից առակաւ զբերան իմ: լուա-
րուք՝ զոր ասեմս և զոր գիտեմ: ի հոգալ իմում
զՎահան գրոց, լուայ զձայն խորտակմանց արեղանց-
զամացայ և զարմանամ. զի իմ էր գրուածն միայ-
նոյ ուրուք, գաղտ ի բնաւից, ևս և ի մեծաւորէն
իմմէ և ի միաբանիցս, և որով իրաւամբ անկաւ
բանն զհասարակութեամբ համայն, եթէ դատա-
պարտելի ինչ կայր ի նմա, իմ էր դատապարտու-
թիւնն, և արդարն զի՞ արար, Ես զայն գիր յանձն
էի արարեալ դատաստանի, ոչ այսբ և ոչ այնր,
այլ սրբոյ եկեղեցւոյ, զի գատեսցէ, որպէս և ա-
խորժէ, իսկ զոքս զիս թողեալ՝ արկին զդատաս-
տանն զհասարակութեամբ մերով:

* Արիստակէս Մրազակի ընդօրինակութեան մէջ այս
նամակի վերատարրինն է. «բոլոր Վ. Հօր Միսայել վար-
դապետի 2ամչեան. որ զրե առ աշակիւսս իւր ի վանս
սրբոյ Կազարու, ի Վեներիկ վանս զուղորեան «Վահան
նուստոյ» կոչեցեալ մտանիմն:

«Այն իմ գիրքը՝ զոր գողացան զորքս ի ձեռս իւրեանց էր. ես ինքն աստ էիս աստ ևս ոսոխք իմ ութմանի շափ առաւելեալք և աստուածարանք վերաձայնեալք. զարմանք են, զի ոչ ոք ի նոցանէ իշխեաց ցայժամ Խոյնեան ելանել ընդդէմ իմ յետ բազում անգամ թախանձելոյն իմ գնոսա՝ այլ փախուստ տուեալ՝ տագնապեցան և իբրև մեղուք բորբոքեալք զհասարակութեամբ մերով՝ զիմեցին անպատկառ յայն ատեանս յոր ետն եմ ապաւինեալս Զի՞ քո և սոյնպիսեացոյ հայր Միքայէլ. բազում ինչ ամենայն իբրք հայեցեալ է իմ յազգ Հայոց. գտի զնոսա աւելի քան զքսան միլիոն. ահ կալաւ զիս թէ զիարգ աղգ այնպիսի կորիցէ, կրկին հայեցայ և տեսի զագոն իւրև զոսկիս բայց գտի խառնուրդ ի նմա պղնձոյ և կապարի և յառաւելն ուշարեցել, զի սուրբ եկեղեցի չէ ընկեցեալ ի ծով զայն խառն զանգուածս Թայս ակն եզեալ իմ յօրինեցի զառաջինն՝ զչորս հատոր գիրս՝ (անուանեալ նոյնպէս Վահան հաւատոյ ուղղափառութեան) ի վանել և ի զտել զպղնձան և զկապարս. հայեցեալ և յոսկինս կանգնեցի ընդդէմ նետածիդ եղելոց զՎահանն: Բայց քանզի ուրուական իմն էր այն, ոչ երբէք հանի ի վեր. և սակայն պատրաստեալ էի ուղղագրել և կատարելագործել զնոյն. զի թէ երբէք պիտոյ ինչ լինիցի՝ առաջի ընծայեսցի սրբոյ գահին իբր բողոք ի բերանոյ եկեղեցւոյն Հայոց ըստ որում է եկեղեցիս:

«Եւ մինչդեռ ես յայս խորհուրդս էիս գողք հանին զայն ի վերս և սկսան անձրեւել նետս՝ ոչ յիմ վերայ, այլ ի վերայ հաստատութեան մերոյ, Զի կայ ձեր, ո՞վ դուք և հասարակութեան մերոյ: Յիս ձգեսջիք զնետս ձեր. կամ ես աւասիկ առաջի ձերս մխեսցին նետք ձեր յաչս իմ և ոչ յաչս այլոց: «Նետք տղայոց եղեն վէրք նոցա» և ըն, եթէ սուրբ ժողովն յիմ կոյս էս ով իցէ իմ հակառակ. եթէ յիմ կոյս ևս չիցէ, ոչ երկնչիմ զի նա՝ ի մայրենի իրաւանց՝ իմ տէր է. զի ես նորա եմ որդիս նա իմ մայր և պաշտպան. եթէ կամիցի և եթէ ոչ, շատ է ինձ այսմ, յորմէ ոչ դադարիմ խնդրել, ոչ թշնամեացս վրէժս, այլ զդատաստան արդարս մինչև հանցէ զիրաւունս ի լոյս ի հաւասարել զկշիռ ճշմարտութեան:

«Ափսոս եղև քեզ, Հայր Միքայէլ, զի ի ձեռութեանդ հասակի պաշարեցար՝ յորոց պաշարեցար. պաշարեցայ այնո՞ բայց ի պաշարմանս վտահ կամ: Պատմեցից ձեզ ինչ մի հարեանցի, Յաւուրս Թերիզա թագուհւոյն եկն զեսպան ի Պէդ քաղաք յօսմանեանց. ի նստել տասնապետի միոյ ձերոյ ի պանդոկի անդ, մին յօսմանեանց քար արձակեաց յանուն թագուհւոյն, Բողոք կալաւ յայնժամ տասնապետն առ զեսպանն և առ սպարապետ իւր. և ել հրաման մետամարտելոյ նոցա առ ի մահ, նահատակեալ յայնժամ ձերոյն, և ընդդէմ և կործանեաց զախոյեանն:

«Ահաւասիկ և ես պատրաստեալ իմ նահատակել. ո՞վ է ոսոխն իմ, ելցէ ընդդէմ. բայց քանզի իսպառ տկարացեալ եմ, առաւել քան զոր կարծէքդ, և անկեալ ի յիշողութենէ և յօրէ յօր նուագիմ, ստիպեմ զձեզ կանգնել և կանգնեմ իսկ այսօր իմ փոխանակ զՀայր Միքայէլ և զՀայր Բանասիրտ: Խօսեսջիք զճշմարտութիւն և մի երկնչիք ի թշնամեաց իմոց, Եւ ես, եթէ մարթացայց, յուսամ թէ ժամանեցից, և զձեզ անփաստակս կացուցից: Անդգամութեամբ ասեմ. շատ են ոսկերք իմ առ շաղփաղփ բանս աստուածարան կարծելոց:

«Իսկէնդէր բէյ, յետ բազում աշխատ աննելոյ զօսմանեանս, հիւանդացաւ. լուեալ օսմանեանց զհիւանդութիւն նորա, ահաւասիկ օր ասելով, արձակեցին ընդդէմ նորա արս եօթանասուն հազար զայն տեսեալ Իսկէնդէրայ, նստաւ ի պատգարակ և ել ընդդէմ նոցա: Իբրև լուան նորա թէ Իսկէնդէր ինքնին գայ պատգարակաւ, ի փախուստ փութացան և ցիր ու ցան մաշեցան:

«Փամ և ես պատգարակաւ ձերութեանս, մի ինչ զարհուրիք. մտահ եմ թէ զարհուրեցուցից և վանեցից զթշնամիս իմ: Եթէ արգարութիւն չիցէ մեռեալ, գործեցից գործ մեծ ի զառամութեան իմուս, իսկ թէ արգարութիւն կենդանի գոլով ոչ կամիցի առնել զօր արժան է, բազուկն արգարութեան—ժողովուրդք Աստուծոյ չեն խորտակեալ, Քրիստաջիք, զի աղգ համօրէն յոտին է. ոչ ուղղափառք (կաթողիկ) միայն, այլ և հայ բազմութիւնք սկսեալ ի ծագաց աշխարհի. ոչ դառնութեամբ սրտի, որպէս յոսոխսն նշմարի, այլ պահանջմամբ արգարութեան, բողոքելով առ ամենայն տէրութիւնս և ոչ իսկ դագարէ՞ մինչև ոչ տեսցէ զիրաւունս. ոչ լուէ որպէս կարծիս, այլ գօտեւորեալ զինուորի, ոչ ասելով ըստ թշնամեաց. ոչ կերիցուք և ոչ արբոցուք մինչև ընջեսցուք զԱրքայանսն, այլ թէ, ոչ ննջեսցուք՝ մինչև ոչ տեսցուք զկաղաղութիւն սրբոյ եկեղեցւոյ և զառաջինն վիճակ անդորրութեան Մխիթարեանց միաբանութեան սրբոյն Ղազարու:

«Մի կարծէք թէ ջախջախ բանիք ոմանց, յառաքելոյն սրբոյ անմիտ անուանելոց (այն է գաղատացոց) խափանեալ զադարեսցի գործարանն տպագրութեան հարկւրամեան ժամանակաց և այն առանց քննութեանս Եկեղեցին Գրիստոսի յայնպիսի բերս ոչ սաղարթի:

«Բայց արդ յինչ իրաւունս հաստատեալ թըշնամեաց ի սոյն եղեն միջամուխս վասն զի ասին, տպագրեալ գրեանք նոցա լի են մշտորութեամբք. յոր գիրս արդեօք, ահաւասիկ են, ասեն, գիրքն Վարդապետ Աստուածպաշտութեանս: Այս գիրք ի քառասուն ամաց հետէ տպագրեալ է. զայսքան ամս ընթերցան և քննեցին թշնամիք և ինչ ոչ գտին, և այժմ գտանեն, և զինչ արդեօք այն իցէ.—մտախնդ, Ահաւասիկ ասեն և գիրքն, որ ի մեկնութիւն Հաւատամքին, Այս այն գիրքն

է, զոր ի ժողովն երեք ամօք յառաջ արարին նոքին իսկ շարախօսք, թէ բովանդակեալ կայ ի նմա ճշմարիտ հաւատոյ դաւանութիւնք. և այժմ՝ զիսորդ մուրամիտ գտաւ. Պատմագիրք Հայոց՝ իրր երեսուն ամօք յառաջ ի լոյս ընծայեցաւ և Հոռոմ և ս հանդիսացաւ. և զի՛ պատահեաց նմա՛ զի այժմ՝ ընթերցմամբ տգիտաց մուրական ցուցաւ:

Ճմա ըստ սմին և զայլ գրեանց, իմա և մի՛ զարմանար. այլ զարմացիր և ակներն տեսչիր՝ զի անհնարին նախանձ և ատելութիւն է, որ զայսպիսի ճարտարաւորէ (°) և զգայուէ:

Վրաւուռն ունին և սորա ի մտիալ, քանզի ի ճոշարանել իւրեանց, և ընդժայր հարկանել զմեզ՝ ժողովուրդք ընդդէմ՝ ելեալ և զուլից նոցա կալեալ զկեցեցուցանեն ասելով՝ այսչտի ամբ են զի Արրաշեանք գիրս նորանորս հանեն և զազգն լուսաւորեն. դուք զի՛ գործէք, գատարկք և փասքուք, վայրափառին շրջիք, ի խաղս և ի զրօսանս ցնդիք. ընդ կանայս և ընդ աղջկունս կատակէք և ին. այսմ՝ յանդիմանութեան ոչ կարելով տանել. «Պու նէ՛, ասեն. ընթեցցին ապա սորա և զիրք սոցա՛ զի հանգիցուք. զի՛նչ ապա՛ ժողովուրդք ընդդէր՛ ասեն, և դուք ոչ աշխատիք յօրինել զգիրս. չկարեմք, ասեն. Ընդդէր ապա ոչ ներէք կարողաց, զի՛ խոչընդակն լինիք նոցա:

«Յաւանն Վապրչայ հէյ անուանեալ ի Քրանսիլվանիայ՝ մին ի Յունաց շինեաց տուն մի փառաւոր. ընդդէմ՝ նորա կանգնեաց և այլ ոմն ապարան մի. ընդ այս չկարացեալ տանել առն, բազում ինչ արար և ծախեաց, զի բարձցէ զայն գոնէ ըստ կիսոյն. ընդէր՝—զի կուրացաւ տուն իւր: Զի՛ կուրացար, ո՞վ դու. բարձրացս և դու զտուն քո, զի թոյլ տուեալ է. յոչ կարել նորա զայս առնել, յանդիմանակացն յաւել յարկ մի ևս և խեղդեաց գտունն:

«Ահա այսպիսի ինչ է և յառաջիկայդ. աւելի ինչ խօսել ի վերայ այսր՝ ի զուր է. քանզի յայտնի տեսնի, զի ի նախանձուէ շարին յուզին այսպիսի իրք:

«Բայց թէ զիարդ ոչ նշմարեն զայս նշմարողք, ինքեանց է գիտելի. նորա լսել ախորժեն զայսպիսիս զրօսուն ևս. (զէֆրինէ վարմաք իստերլեր), առնեն՝ զոր հաճին, և խօսին ի հաճել. գնա՛ մեռիր, եկու՛ սիրմ, հատանեն զզլուիս անպարտ և սանդրեն զժօրուսն, օ՛ն ասեն. դուք այսպէս և այնպէս ասեն բերանով և հեղձուցանեն գործով. և զի մխիթարիմք՝ փառս տուր Աստուծոյ, զի որ Քրիստափոր անուանիմ, Քրիստոնեայ եմ. այլ առանձին՝ գոհանամ զԱստուծոյ, զի յայսպիսի վարանս զարթոյց զողիս ուղղախորհուրդ քաղաքացեաց համօրէն, յառնել ոչ եթէ ընդդէմ՝ թշնամեաց, այլ ի պաշտպանութիւն զրկելոյս. մինչև զանձինս ևս զնել ի վերայ միաբանութեանս մերոյ, որոյ վասն բազում անգամ ժողով արարեալ և զիրկոտասան իշխանս կարգեալ սասիկան՝ զրեցին միաբան ի Հոռոմ և զգիրն զարաւշիւ վեց հարիւր

զուռուշ ծախելով՝ առաքեցին ի Պուսքրէշ առ Խէլքէնձեանն, զի անձամբ տարցին ի Հոռոմ և փաստարանեալ՝ արացեն զոր կարեն, զարծեալ առաքեցին և զայլ գիր դէպ ուղիղ ի Հոռոմ և կրկին ևս առաքեցեն և ունին առաքել:

«Այս ամենայն եղև և լինիս բայց ընդ փոյր, զի կամ ի դերև ելանէ, կամ բազում ժամանակաց ակնկալեալ է ըստ սովորութեան տեղւոյդ. որպէս ցուցանեն գործք, որ գործեցան յառաջ ժամանակաւ. Ապաքէն Արրահամ կաթուղիկոս Աիրանանու վասն գատի մերոյ ժամուս զերիս ամս պարուանդեցաւ անդր (Հոռոմ). և հուսկ զկնի առանց կոչման ել՛ Պոնի յատեան դոցա, և ի միջոյ կիսոյ ժամու էառ զոր ինդրէրն, զի պատրաստ էր ամենայն. ապա բացեալ զզլուիս իւր յատնի անդ սացաւ Աստուած. «Քոհանամ զքէն, Տէր, զի ի կամել զդատ մեր մեծ, զոր ունէաք ընդ քեզ, եկիր յարեւելս և վճարեցեր զամենայն. ապա թէ վրիպեալ զայիր աստ, մինչ ի կատարած աշխարհի տևելիբ զայն»:

«Պորա իրաւուռն ունին այսպէս վարելոյ, զի իմաստութեամբ գործեն, իսկ ազգ մեր մանաւանդ արեւելեայք մտօք զօրաւոր, ոչ իրաւուռն գիտն, և ոչ իմաստութիւն ճանաչեն, զի չեն ուսեալ, զոր ինչ ինքեանց՝ հաճոյ տեսանեն և ականջաց իւրեանց յարմարաւոր՝ փարին զնովաւ. ապա թէ այլ ազգ ինչ՝ մերժեն:

«Յաւուր միում ի ժողով Մանուկեանց եհարց եղբայր նորա Մաթուսաղայն. ի Վահանիս ասէ, որպէս լսեմ, գրեալ է. «Վարդ դարուց եկեղեցոյն Հայոց անմուլար իջեալ». և զիսորդ լինի այս, և տու պատասխանի. այդ քեզ անհասկանալի է. «Տէմբրտէն պիր պիր լէպլէյպի հէր գիշ չէ յնէմէզ. յերկարիլ բանից՝ ասեմ: եթէ կամիս՝ կարիս անսալ. լուր զինչ ասես, աղայ.—զոր վկայէ սրբազան պապն Հոռոմայ, ընդունիս.—Այո, ընդունելով ընդունիմ ասէ. և ես ասեմ. ասես և՛ լսեմ և՛ ընդունիմ. ոչ աւանիկ ծՊ. Գրիգոր սրբազան պապն հրովարտակ եհան վասն Հայոց, յորում վկայէ «ազգ Հայոց՝ ազգ մեծ, ազգ անուանի և հզօր ի սկզբանէ և այսր միշտ հաւատարիմ և հարազատ որդի գտաւ Հոռոմայ սուրբ եկեղեցւոյն, և ինչ Այս հրովարտակ տպեալ է ի Հոռոմ: եթէ այս ազգ մինչև յաւուրս սրբազան քահանայապետիդ գտաւ հարազատ և հաւատարիմ որդի Հոռոմայ սուրբ եկեղեցւոյ, ուրեմն անմուլար էր յայնժամ, ապա թէ ոչ՝ անհարազատ գտանէր. զի՛նչ ասես դու. ոչ քննութիւն և ոչ հարցումն. այլ զի՛նչ. ասէ. սրբազանն այդպէս է ասացեալ, նէ՛ մանի. ասեմ ցիտ. ոչ սասցի քեզ. թէ զոր ոչ ախորժես՝ ծանր լսես և ոչ ընդունես. ոչ յայս նիւթ միայն, այլ և յայլս:

«Ան իմ աւարտեալ զիտօսս, ասէ ցիտ Մանուկ աղայն, վարդապետութիւնն ձեր յօրինեաց զիրք ընդդէմ Հայոց, իսկ այս Վահան գիրք է քառագովութեան Հայոց. և որպէս լինիցի այս. պու նէ՛

իւն Տրիգլ, պու նէ լահանա թուրչուսու:— Ետու պատահանի. եթէ իմացար զոր ցարդ ասացի, իմացիր և զոյդ: զոր ասես. այս գիրք հայի ի ջատագովութիւն Ճշմարտութեան եկեղեցւոյն հայոց և լին. այն գիրք հայի ի հաւատս: Այս չափ ինչ շատ լիցի առ այժմ, զի չէք կար զօրութեան ի ձեռին իմում:

«Բայց սակոյն ինձ մնայ բողոքել յատեանն Քրիստոսի. զի յետ վատակելոյ իմ զամս բաղումս ի պատիւ եկեղեցւոյ ի ձեռն զողոց զատապարտեցայ ի ձերութեան իմում և ի ստապատիր ամբաստաց» կեղտ անուն ընկալեալ՝ հանգրծեալ իմ աւսիկ մաշիլ ի գերեզման: Բատ արացքէ ինձ Տէր ըստ արդարութեան իմում: Բայց ակն ունիմ, թէ նա ինքն սուրբ եկեղեցին Հոռոմայ առանց ինչ տեսանելոյ զորուպս՝ արդարացուցէ զիս. քան զի ի նա ապաւինեցայ:

«Իսկ զոր գրեալ էիք վասն Աահանին, թէ ի նա նշմարեցի ընթացք Տիգրեթացիօնին, ծաներուք զի այդ մտածութիւն չունի յայս գործ. զի զիտումն Տիգրեթացիօնին է ցուցանել՝ թէ մարթ է ուղղափառաց հաղորդութիւն առնել ընդ հերձուածողաց ի հոգեւորս. այդ կարծիք մերժելի է յինն. իսկ զիտումն Աահանին է ցուցանել թէ եկեղեցի Հայոց, իբրև եկեղեցի ընդունի զամենայն ճշմարտութիւնս հաւատոյ:

«Եւ թէ ունիս զօրինակ առաջնոյ թղթոյն գրելոյ յինն առ սրբազան ժողովն. ընթերցիր, զի յայն թուղթ բովանդակի Աահանն. զնեմք ի գիրս թուղթ մի համառոտ առ սրբազան ժողովն, զոր մատուցէք սրբազան հօր. Ողջ լերուք:

բ. Օրինակ համառոտ թղթոյն.

Սրբազան Հայր

«Իրկուս գիրս գրեցի առ սրբազան ժողովն իբրև բողոք, զոր գրեմ առ սրբութիւնդ իբրև աղերս: Լուեալ էք զվիճակ ուղղափառաց քաղաքիս. բաժանումն անողոցելի գայթակչութիւն անասելի բամբասանք սոսկալի անուն քահանայութեան ընդ ստիք ալխարհականաց հեծէ պատճառաւ զազարման առաքելութեան մերոյ և տգազրութեան. այս հուր օր յօրէ բորբոքեալ առչորէ և ոչ ունի շիջանիլ հնարիւք առանձին մարդոյ: Հայր սուրբ, ձեռն սրբութեանդ կարող է բարեկարգել իբրև ձեռն որ գլուխն է եկեղեցւոյն Քրիստոսի. ապա թէ ոչ կատարածն հայի ի յատակս զժողոց: Այս ձեռն սրբութեանդ, որոյ հայրազում տեսչութեան յամենայնի հնազանդ

ծառայ Հայր Միքայէլ Չամչեան:

1816 փետ. 25.

Գ. Թուղթ Հայր Միքայէլի Չամչեան առ միաբան վարդապետսն իւրեանց եթնեթնիս, որք եկին ի սուրբ եկեղեցիս Հայոց վասն միաբանութեան և սիրոյ:

«Վերապատուելի վարդապետաց՝ եղբարց իմոց և տեարց՝ ի Տէր ինդալ:

«Իցէ թէ յաւելից հայել ի տաճարն Տեառն զօրութեանց, զի հեղան զինն ջուրք մինչև յանձն իմ, և անդուգք անհնարեմք փաշարեցին զիս. եմուտ գրուի իմ ընդ անկողնոյ անկաւ ի մահիճս ցաւագնեայ անձն իմ լի հիւանդութեամբ. բայց ոչ ասեմ թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց, այլ ի նա ապաւինիմ և ի բարեխօսութիւն սուրբ եկեղեցւոյն Հայոց, յոր վասն այսչափ տքնիմ և խոշտանցիմ զի նա լսէ աղաչանաց իմոց, զոր ի ներութեանս գոչեմ առ նա, և տոյ ինձ առողջ մարմնով ելանել ընդդէմ թշնամեաց իմոց և ասել. Անձն իմ ցնծացէ ի քեզ. և, Եստուած, ո՛ն նմանի քեզ:

«Եւ արգ, ընկալեալ զգիր եղբայրութեան ձերում, և տեղեկացեալ ամենայնի, ուրախ եղէ յոյժ, և թէպէտ յամենայն սրտէ անձկայի գալ ի ժողովն ձեր, բայց զի չունիմ կար ելանել յոսս վասն որոյ պիտուս զայս գիր յանձնառական զողոքողեալ ձեռօք գրեալ առ ձեզ, աղաչեմ—զի մի զիս պատճառ տեալ՝ յեսս կացջիք ի հոգեւոր գործոյդ, այլ միով հոգեով զօրացեալք ի կատարումն առաջիկայ գործոյդ փութացէք. յուսամ յԱստուած՝ տալ ինձ կար և զօրութիւն ելանել յոսս և պնդել զհետ ձեր և տեսանել բացակայ աչօք զխաղաղութիւն սուրբ եկեղեցւոյ, զմիաբանութիւն ազգիս զսէր եղբարց մերոց առ միմեանս, և ուրախ լինիլ: Եւ զայս գրեալիք, զի ժողով եղբարց իմոց զխորդ և իցէ ստորագրեցէ, նոյնպէս և ես յօժարակամ կամօք յանձն առնում ստորագրել և կնքել:

«Ողջ լերուք ի Տէր ի պարմանս համօրէն ազգիս և ի միութարութիւն սրտիս Հոգելից միաբանութեան ձերում նուստ ծառայ

Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ՉԱՄՉԵԱՆ.

1820 Յունի. 18

յաւուր կյարակի ի Պեչողուս:

- «Ենուանք վարդապետացն, որք եկին վասն միաբանութեան ազգիս ի յնիդափու. ի յունի. 3. «15, Մեթոք վարդ. Աղաչաղեան, միաբան Արբաշեան, սա եկն առ ձեզ.
- «25, Գրիգոր վրդ. Խապարաճեան, միաբ. . .
- «35, Թումա վրդ. Ճէվհէրճեան, միաբ. . .
- «45, Սերորէ վրդ. Ճէվհէրճեան, միաբ.
- «55, Թադէոս վրդ. Ազնաւուրեան Եսկերեան, միաբան Արբաշեան.
- «66, Քերօրէ վրդ. Ազնաւուրեան, միաբան Արբաշեան, սա այժմ գնաց ի Աէնէտիկ.
- «35, Սահակ վրդ. ձեռնադրեալ ի Վ. Պօլիս սա եկն առ ձեզ.
- « 8, Պօղոս վրդ. բժիշկ Վուտինացի միաբան Գօլէճուս, սա եկ.
- « 9, Պետրոս վրդ. ձեռնադրեալ ի Վ. Պօլիս սա այժմ հիւանդ է.
- «10, Ստեփաննոս զերապայճառ եպս. Ազգերեան, միաբան Գօլէճուս, սա ի տան իւր նստի այժմ:

3. Թարգմանութիւն արգար վճռոյ Պիոսի Է. պապին Հոռոմայ վասն «Աահան Հաւատոյ» կոչեցեալ մատենին և հեղինակի նորուն Հ. Միքայէլ վարդապետին Չամչեան:

«Զգիրքն կոչեցեալ Աահան Հաւատոյ» ուղղա-

փառութեան Հայոց մատուցին յատեան ամենաբարձր սրբազան քահանայապետին Պիոսի եօթներորորդի որդի խելութիւն ըստ հարկելոյ իւրում պաշտանի սրբութեան հրաման եւ «Ժողովոյն Տարածութեան Հաւատոյ» ի քննել մի առ մի զամենայն բառս և զբանս մատենին հանգրծ կարևոր և հարկաւոր բացայայտութեամբ աստուածարանական, տրամարանական և պատմարանական խնդրոց իմաստից, Եւ սուրբ Ժողովն ըստ հրամանի սրբազան քահանայապետին և ըստ պահանջելոյ իւրումն արդարակշիռ քննութեան ուղից տեսութեամբ և բաղմամբ մատենական մտածութեամբ ճշմարտաւէր ոգւով և առանց մարդահաճութեան քննելով ստորագրեցին վասն անարատ լինելոյ բնագրի մատենին յամենայն հերետիկոսական և հերձուածողական մտածութեանց և յամենայն մոլորական նախադասութեանց, թէ և յունեց այնպէս փատահամբաւ եւլ իցէ։ Ընկալելով գատորագրութիւն սուրբ Ժողովոյն ամենաբարձր սրբութիւն պապին վճռեաց այսպէս. «ուղղափառական է մատենան Աւսան հաւատոյ, և հեղինակ սուրուն Հ. Միքայէլ վարդապետ Զամչեան հաւատարիմ որդի հաօվմեական սուրբ եկեղեցւոյն»։ Եւ հրամայեաց զի այս քննութիւն և դատաստան ժողովոյն և սուրբ վճիռ իւր հրատարակեսցի մեծաւորաց եկեղեցեացն Պատանդնուպոլսոյ և այլոց։

Ըայց վասն զի գիրքս այս պատճառ եղև գայթակղութեան բաղմաց կաթողիկ ժողովրդեան, ոչ ետ հրաման ի տիպ արձանացուցանել զսա ի մերումս ժամանակի այլ զընտրելին զննել յարբունի դանձարանն Հռոմայ և զուղիղ օրինակ մի ևս անկորուստ պահել ի Աննետիկ ի փնս սրբոյն Ազարուս և զերկոսեանն յառաջոյ և ի վերջոյ կրքել սրբակնքով մատանեաւ ամենաբարձր սրբազան քահանայապետին, Արում և յորմէ է ամենայն սուրբ քննութիւն։

Օգոստինոս Վարտիրոս առաջին նախագահ ժողովոյն Տարածութեան Հաւատոյ ծայրագոյն եպիսկոս և վարդապետ աստուածարանութեան։

Պարրիչիոս Թուրիտացի ատենաբան ժողովոյն։

Պամիլլոս Արարցեանի ատենադպիր քննութեան ժողովոյն։

Քարգմանեալ ի Հռոմ ի լատինականէն ի Հայ ի Հ. Բցնատիոս վարդապետ Գափաղեան յաշակերտէ ամենապատիւ Տեառն Մխիթարայ մեծի Աբրայիս։

Հ. Զոհրապետանի նամակը.

Պատուական և սիրելի եղբորորդւոյ իմոյ պարոն Մկրտչին ողջոյն և օրհնութիւն.

(յետ բազում բանից գրէ այսպէս)

Ըայց այէսէվիէ քաթողիկաց հալածումին բանը բեզմէ կը լսեմ. գամք որ այս բանիս մէջը որդիք, աշուրնից բացէք, որ բոշ տեղը դուք ալ արան չկրթաք, դուք ձեր ուղիղ քրիստոնէական հաւատը պա-

հելով առանց խղճմանաց ձեր ազգի ժամէն յետ մի կենաց երթալու. ան ճամի չէ, սինօլա չէ, հոն ալ նոյն քրիստոս և Աստուածածինն է, որն որ քրէնկին ժամբ. այրը սէչի չի կայ, և ասանկ կրսնն նաև Գռէնկիստանի ֆռէնկները. ու կրոր կը լսեն թէ՛ Հայոց ազգը երկու ֆոխայ եղած՝ մէկ զմէկը կը հալածեն, հախր բուն հայերուն կուտան. քաթողիկները էչէկ են կրսնն որ այս պատճառով ստակէ կելլան, բանտը կը մտնան, ասանկ բեռնին լսած է նաև փափին քաթոլիկներէն և փոեւտներէն, որ մեր խեղճ միամիտ քաթոլիկները տղիտուութեամբ կղտօնին, եօխ կըլլան։

Ու սաի դուք, ինչպէս ըսի, խելքերնիդ գլուխնիդ ժողովեցէք. դուք ազգաւ Հայ էք, ձեր պատրիարքին պէտք է որ հնազանդիք, որ յայտնի ճշմարիտ հաւատոյ դեմ բան քեզի թէքլիֆ չընէր, հապա շատ շատ ձեզի պիտի բսէ թէ՛. քաղբիքօն ժողովքը մի ընդունիք. դուք ալ՝ ըսէք թէ՛ մենք աստուածարան չեմք, անոր ուղիղ հաստատ պատմութիւնը չեմք գիտեր. թէ որ աեւտարանին ներհակ է նէ, չենք ընդուներ և նոզիւլով կը նոզիւմք. ըսածներուս վերայ չըպղտորիք, զէրէ փորձով գիտեմ ըսածս. քսան տարիէն էվել է, որ Փռանկիստանի մէջ ուղղափառ բսածներուն հետը կըվարուեմ միշտ հետերնին կը մտնամ կելլեմ. և սա կրսեմ որ՝ ճշմարիտ քրիստոնէութիւնը հայու ազգին մէջը կրպահի (իմացիր, այէսէվիէ) բոլոր ազգերը քաթոլիկ ըլլայ չըլլայ) և ֆռանկներուն խելացին ու բարեպաշտն ալ ասանկ դատաստան կընէ տեսնելով իրենց քրիստոնէութիւնը։

Ժսկ ընդհանրապէս ֆռէնկներն այս հալածանաց բանին վերայ մասխարայ ընելով մեր բոլոր ազգը եօնդուն ընոնցի տեղ կը գնեն, և Հռոմայի քոթիէն կը մեղագրեն և անորոքմ, անգուլթ է կրսնն, որ իրեն կեղճաւոր սօֆիութեամբն պատճառ կըլլայ այն միամիտներուն վնասուցը. հերիք չէ՛ մի որ մեր խղճայի ազգը այլազգեաց թօփուզին տակը պէրբամ եղած է ահա եօրինէկը թագէ առջևնից կեցեր է. սա կաթոլիկութիւն մատտէն ալ մասնաւորապէս մեր Հայ ազգին մէջը ընկած՝ ան սեպեպով ազգերնիս ամէն տեղ իր հանգստութիւնը կորսնցուցած պէրբամ եղեր է. և ստով մասխարայ է բոլոր ազգերին առջևը, տաճկին, զրֆատիին, հոռոմին, նաև ֆռէնկին. ֆռէնկին կրսեմ որոց հաւատքին խաթըը համար մեր շաշխըն հայերը ճիտերնին կուտան որ հաւատքին զլխաւորները հոռոմայ բոլոր գէֆրի մէջ խղղըրված են, Տահա շատ բաներ կար բսելու այս մատտէիս վերայ, ըայց տեղս չի տաներ. գիտեմ որ սա բանս մեր անմիտ ազգին հասկըցնելու և ուղեղնին խօթելու պէտք է, որ մէկ մը արթմանան նային թէ ինչ հալի մէջ են՝ այլ ճար չկայ։ Այս միայն զրիցի սրտիս աստիկ կսկիծէն, որ պարէ ձեզ զդուշացնեմ, որ աշվընից բանտը, և սոշ տեղը էչ նահատակ չըլլաք, ինչպէս կրսէ ռամկաց առակը. քիչէն շատ իմացիք ողջ լերուք։

«Էօրեղբայր ձեր Հայր Եօվհաննէս վարդ. Զօհրապետն.

Եուսիկ Վ. Մովսիսեան.

